

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ միկ ծաւրով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 ֆր.

Կ Ա Ն Ի Կ

Մանկոցման ստոր
20 ամսիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՁՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

Ir vounk

VARNA (Bulgarie)

Редакция

НАЪВСТНИКЪ

Иравунк

ВАРНА

Գրութոյնք եւ չեմ
տրոյիք

ՍԹԱՓՈՒՍ

Այսօր նոր ծարին կը թե-
ւակոխենք շատ սրտաբեկ բայց
ոչ յուսահատ : Վերջացող տար-
ւոյն մէջ մեր ազգային քա-
ղաքական կեանքը ահեղ փոթո-
րիկներ անցուց : տասնեակ
հազարներով նոր զոհեր տուինք
և աւերով գաւառներ ծայրա-
յեղ թշուառութեան մատնուե-
ցան : սակայն կը յուսանք թէ
այդ չարիքները որ առթուե-
ցան խմբակի մը յախուռն և յի-
մար գործունէութենէն, ըս-
թափեցնել կոչուած են հայ
ժողովուրդը գէթ մասամբ, որ-
պէս զի սա ա՛լ ուշագիւր ըլլայ և
չը թուադրէ յառաջիկային որ
նոյնանման ոճրային սխալներ
գործուին միմիայն կուսակցա-
կան նեղ հաշիւի գոհացում տալու
համար : Հայ ժողովուրդի սթա-
փումէն մենք բոլորովին յու-
սահատ չենք շատերու նման,
մեր ժողովուրդը կը սթափի
ու կրնայ դատել եթէ գէպ-
բերը ու պատկերները իրեն
աչքին առջեւ անխաղախ ու
յստակ կերպով պարզուին : Հե-
տեալաբար ամբողջին սթափ-
ման անհրաժեշտութիւնը զգա-
ցող ամէն ձեռնհաս անձ ու
մարմին իրեն նուիրական պար-
տականութիւն պէտք է համա-
րէ իրողութիւնները, որչափ
դառն ալ ըլլան, իրենց իս-
կական գոյներով և առանց
վերապահումի պարզել ժողո-
վուրդին, ցոյց տալ կեղծը ու
խարդախը, խաչագողը և դրա-
մաշորդը, ուղիղ Յեղափոխու-
թիւնը ու ազգամիտ ուղղու-
թիւնը :

Բայց պէտք չէ մար-
տութիւնը անվերապահ և ա-
նեղիկազօրէն յայտնողները մեր
մէջ խիստ անբաւական թիւ մը
կը կազմեն, մինչդեռ շատ փը-
շտ և անհաճոյ կողմեր ու-
նեցող ճշմարտութիւնը տարա-
ծելու դժուարին գործը իր
շատ աւելի բաղմամբ քարո-
ղիչները ունենալու էր :

Ճշմարտութիւնը անխաղախ
օրէն ժողովուրդին պարզելու
պարտքը միայն լրագրիւններու
վրայ չի ծանրանար : ժողո-
վուրդին խելահաս մասը՝ դէպ-
քերը ըստ բաւականին քննելէ
ու լսելէ վերջ՝ իրեն հակառակ
պարտք ստանձնելու է ճշ-
մարտութեան պաշտպանումի
գործին ախոյեան հանդիսա-
նալ : Ահա այս անվերապահ
պարտաճանաչութիւնը կը պակ-
սի մեր լուրջ և խելահաս
դասակարգին մէջ : Երկուս պէտք
ինչ կուզեն ան թող ընեն
կամ թող ըսեն ի դատապար-
տելի անփութութիւնը պատճառ
կը դառնայ որ միամիտ ամբո-
լը խաբուի կեղծաւոր խաբե-
բանիւն, որոնք ամէն միջոց
ներելի կը համարեն իրենց
ընչաքաղցութեան կամ փառա-
մոլութեան գոհացում տալու
համար : անոնք խղճի ամենայն
հանդարտութեամբ ամբողջին
մէկ մասին քսակը կը պարպեն
միւսին արեւը կը թափեն
սուրը նպատակին յաջողութեան
համար առանց մաղի չափ հա-
ւանականութիւն ունենալու :
Եւ երբ աղէտը կը ցցուի ու կը
ծառանայ, դիւային փայտ մը
իրենց գէմքին վրայ «ախըր
էս անգամ էլ չի աշողլեց» ըսե-
լով միայն եղածին հաշիւը
գոցուած կը համարեն : իսկ եր-
կու օր վերջ նոր շահագործ-
ման դուռ բանալու համար մի-
ւնոյն պատասխանատուները
«ասկէ վերջ հարկեր պիտի հա-
շուենք և մէկ պիտի գործենք»
ըսելու աներես հտպիտութիւնը
կուենան, իբր թէ ասկէ առաջ
տասը տարիէ ի վեր անհաշիւ
գործել եւ միայն աղէտը ար-
տադրել իրենց քարենք եղած
ըլլար : Հաւատանք այդ հազար
անգամ փորձուած շարլաթանե-
րուն : Այդ ամեն խաբեբայու-
թիւնները սակայն միամիտ ամբո-
լին կամ ասոր մէկ մասէն կրնան
կլլուիլ, եթէ լուրջ և բանիմաց
մասը չը փութայ զանոնք
գիմակաղերձ ընել ճշ-
մարտութիւնը պարզել ու ամ-

փոխը սթափեցնել :

Մեր մեծագոյն յոյսը ժո-
ղովուրդին այս սթափումին վը-
րայ է : Ուստի կը մաղթենք որ
նոր ծարին նոր դարադուլ մը
բանայ Հայ ժողովուրդի սթափու-
մին :

ՎԵՐՋԱՊԵՍ

ՓԱՌՔ ԱՍՏՈՒԾՈՅ

ՈՐ ՅԿՍՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՍԽԱԼՆԵ
ՆԵՐԸ ՃԱՆԱԶԵԼ

«Մի ազգ կամ մի անհատ չի
կարող մենիւ իւր սխալները խոս-
տովանելով՝ բայց կը մենի ու կո-
չնանայ իւր սխալները կրկնելով»
Այսպէս էր գրում որոշից մի քա-
նի ստոր առաջ «Շահէն» կեղծ
ստորագրութեամբ, երբ անոնք էի
մեր գործիչներ յարեւապատակ՝ այլ
անխորհուրդ եւ անհեռատես գոր-
ծերը, որոց ցաւալի հետեւանքները
հեռատեսիլով կարողութիւնը՝ այն
ժամանակ տկարանում էր գործիչ-
ներ իւր ազգասիրական կարողութեան
հանգէպ : Նրանք մի բան էին ճա-
նաչում միայն, ազգասիրական գործ,
իսկ հետեւանքներ մասին՝ ո՛չ մի
խորհուրդ : Նրանցից մին՝ օրինակ
Վարդօ. բարկաճայթ ոճով եւ շան-
թափու խօսքերով գրում ու գո-
ւում էր — յառաջ, դէպ ի յե-
ղափոխական Ս. Գործը, մենք պէտք
կոխտենք հին սերունդին հին
գործիչներին ու յառաջ խաղանք գէ-
պի ի գործ . . . — Ես ի լուր այս
կոչին, ի՛ հարկէ ասպարէզից ետ
էի կասում իմ յաջորդներին ուս-
նակին չի լինելու, եւ ինձ հետ
էլ չատեր, որոնք պատկանում
էին հին գործիչներ խմբին որով
պակասեցան գործելու, ասպարէզից
չառ փորձառու անձեր, այն միակ
մեղանքով որ հինք էին շոքա :
Մի ուրիշը գոչում էր — Ամեն բան
մենք մեղանք գործիչներ, առանց
ազգէն օգտուելու եւն. — Իբր թէ
իրանք կամ իրանց հետ գործողնե-
րը կամ դրամները հայ չի լինին
Հնդկաստանից կամ Չինաստանից ե-
կածներ լինէին : Դարձեալ մի ու-
րիշը բացազանչում էր թէ — յառա-
ջիկայ գարնան՝ Մայիսին Վառայ
ծովի շրջակայներից պէտք է ըս-
կանք խլաւոր, ուր արգէն բաւա-
կանաչափ գէնք ունենք պատրաս-
տի եւն եւն. — Ու այս կերպով

միամիտ ինքնամասնութեան մի ծա-
նր ոճիւր էր գործում եղ քաւով
թշնամու հացին, եւ անարգում էր
հների, փորձառուների խորհուրդը,
եթէ երբեմն սոյն վերջինք ջանք
էին անում ուղղութեան բերել մեր
յանգուղին ազգասէրները, ու մը-
նում էին անդրդուելի :

Սակայն այսօր, փառք Աստու-
ծոյ, յիշուուն ազգասիրութիւնը
տեղի է տալիս խոհեմ եւ փորձա-
ռու ազգասիրութեան, Երբեմն մեր
«անտանելի, հայհոյիչ» եւն Վարդօն
այսօր իւր Բաց նախակներով Շար-
ժում թերթում շառ լուրջ եւ
հետեւելի խորհուրդներ է տալիս
«Դաշնակցական ընկերներին». եւ ես
Դաշնակցական չի լինելով հանդերձ
առաջինն ծափահարում եմ Պ. Վար-
դօն. եւ որպէսզի այս գրածս Վար-
դօի խորհրդով դուռած լինելու խե-
ղաքար կարծիքներէից աղաւթ լինի
հրատարակում եմ «Իրաւունք» լրա-
գրում, որի Տէր խմբագիրը, հա-
ւատում եմ, վեհանձնաբար մոռ-
նալով խմբագիր երի սովորաբար մէկ
մէկի գէթ ունեցած արուեստակ-
ցական հակառակութիւնը, կը հա-
ճի հրատարակել ինչ որ օգտակար
է եւ անկեղծ, գտնուելով խմբ-
ագրական բարձրութեան վրայ :

Շարժումի 681 թիւի խմբագ-
րականում կարդալով լուրջ ու կարե-
ւոր առաջարկութիւններ, յիշեցի մի
հին անցք որ դարեր առաջ կա-
տարուել է Յունաստանում — Մի
փիլիսոփայ տեսնելով ջրի սափո-
րը կտորով մի պատանու, որ
կարմրել է, ասում է նրան. —
Որդեա՛կ, մի՛ ցաւիր, որ մի սափոր
կտորիցի, վասնզի առաքնութեան
գոյն տեսայ երեսիդ . . . — ճիշդ այս-
պէս, ես էլ իմ կարգին՝ է՛լ չեմ
ցաւում որ Վարդօն երբեմն «հայ-
հոյիչ է եղեր, «չարաչար յարձակեր
է, » «անտանելի է» թուացել
մէկին կամ շատերին, այդ տմենը
ոչինչ կրո այսօր նա՛ մի Դաշնակ-
ցական լինելով հանդերձ մասնաւոր-
չում է իւր պատկանած կազմա-
կերպութեան թիրի կամ ուղղելի
կողմերը :

Այժմ լսենք, թէ ինչ է ասում մեր
նոր Վարդօն. սւետարանական ա-
ստութեամբ՝ վերստին ծուռած Վարդօն,
նա առում է

1. — Թէ՛ պաշտօնական Եւրոպան
անտարրեր է դէպի մեր դատը . . .
2. — Թէ՛ մենք պահանջենք, որ Դաշ-
նակցութիւնը ոչ մի ապստամբական
քայլ չանէ, որովհետեւ կարճ միջո-
ցում Թուրքիան ու Եւրոպան ցնցող
գործ անկարելի է անդի իսկ փորքե-

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ԿԱՂԱՆԴԱԿ» Կամ Գրական Փշրանքներ. Ա. մատ. հրատարակիչ Մ. Գալփաքեան. Տպարան Մ. Գալփաքեանի Վառնա 1905»

Պալքանի հայութեան գրական կեանքը այնքան ամուլ է՝ որ հրապարակելն ող մէջ գիրք իրեն ուշադրութեամբ երևալի մը որ զընդհանուր եւ խորհրդանշական ենք : «Կաղանք»-ը կողմից գիրքով իր «Գրական փշրանքներ» անունովը, 50 էջերովը եւ 40 անդամ գնովը արաշարժօրէն համեմատ բայց գնահատելի գրքով մըն է որ կուգայ մեր անբերի մտաւարականութեան մէջ փոքրիկ ոգիւն մ'ալ աւելցնել : Պարունակութիւնը կը բաղկանայ խոսքի խոսքի զորեւտոտանաւու եւ արձակ զրուածներէ : Վերջիններէն՝ կայ ընտանեկան ֆանթէզի մը որ թարգմանութիւն է, մեր հանրածանօթ եւ երկարապատում Ա. Շիւտանիանէն բաւական թերի, շատ հետաքրքրաշարժ «Եւ բացառապէս կարճ նորավէպ մը եւ «հօր մը կաղանքէք» որ թէպէտ ոչ չօրհանդիս պէս անուշ եւ ոչ հինգ ֆրանսիացի մը պէս հնչուն՝ գէթ շատ արտփելի ոճով գրուած եւ զործնական թելադրութիւններով ակադեմի ընծայ մըն է ոչ-պահանջողա չգաւի մը համար :

Ուսանաւորներուն մէջ անհերքելիօրէն պատուոյ տեղը կը գրուեն Չաքըրեանի երկու վերջին աստիճան ինքնատիպ եւ վառվառն կտորները : Երկուքն մէջ ալ թրթուռն ջիղ կայ, եռու գեղ կրք, յուսալար եւ յուսակուր հոգւոյ մը կծու հեղանալը, խօսքեր որ հակառակ իրենց գրական չափերն ժողովրդեան մը սրտէն կը պոռթկան հրաշք եւ անխնայօրէն խորակող :

Չաքըրեանի հետ ի ծնէ բանաստեղծ մը իմած է գրեցումս : Երանի թէ իր ցանուցի ուրիշ գրուածքներն ալ հաւաքուէին եւ շուտով լոյս տեսնէին : Դալով անոր հակաքրքրատնական ոգւոյն զոր, աւաղ նոյն գրքովին մէջ աւելի վարանկոտ շնչութեամբ ստեպ արձագանգուած կը գտնենք՝ պէտք է ըսել որ անկա հիմնովին իրալ է եւ միայն անոնց մօտ հոսկանալի որոնք բուն քրիստոնէութեան այբուբենը գեղ չեն հոսկցած : Անտարանին որ՝ էջին վրայ Չաքըրեան կարգացիր է գրական խոստում մը թէ փրկելի իր անուան շինուած վանքերուն կէս գիշերէն երգուած շարականներս լուսն եւ օրը միջին իրկուն ճալիր ճալիր վառող մոմերուն փոխարէն՝ պիտի կոկոսէ բնութեան օրէնքները հեղեղ պատմութեան կազմական զարգացումը, անտես կուրացած ազգի դարերով շարունակաբար գործած ինքնասպանութեան ոճերը՝ զայն փրկելու համար սուրբի բերնէն : Ազգերը իրենք կը պատրաստեն իրենց երջանկութիւնը կամ մահուան դատաւինքը. բայց կրօնքը կրնայ ազդի մը բարոյական կողմը զօրացնելով անոր կեանքը երկարելի թէ նա շիտակ ըմբռնուի :

Ճգնաւորներն ուսանաւորները աւելի գրական համ ու հոտ ունին քան Չաքըրեանինը, բայց քիչ մը նուազ կորով եւ նուազ ժողովրդական ոգի : Դիտելի է որ ամեն կողմէ փչող անկուսի [աւթատան] հովերը իրեն ոճին վրայ շատ չեն կրցնի ազդել : Նոյնը ճշմարիտ է ամբ. Սեպուհի մասին՝ որ առանց

գրական հետեւանքը կուեննայ, որ միայն կը գրուի բացարձակ կերպով կայսրութեան եկամուտները իր հայեցողութեամբ տնօրինելու իրաւունքից վերջ ի վերջոյ դա կը լինի այն, որ կայսեր ինքնակալութիւնը կը ոչնչանայ եւ ուսմիկը թագաւորութիւնը կը տիրէ :

Վրտակի կարճ ատենարանութիւնից յետոյ, որը աշխատում էր ցոյց տալ թէ անկարելի է շարունակել առանց ընդարձակ անտեսական ու քաղաքական բէթօրմներ, ժողովը դրամատիկական կերպարանք ստացաւ :

Սուրբ Սինդի պրօփոր Պօղոսեանցիւր շտապեց օգնութեան հասնել Մուրավիէվին ու Կոկոսիւնին : Նա իշնցրեց, որ ցարը ոչ միայն թագաւոր է, այլ եւ օրթօտակ եկեղեցու պապը եւ որ նրա պարտականութիւնը չը պիտի լինի միայն քաղաքական միտումներ, այլ եւ կրօնական : Ուրեմն եթէ ցարը լքանելով աւտօկրատիան, ժողովրդի ներկայացուցչութիւն հաստատի, եկեղեցին չի գլխատի, այդպիսով : Եւ որովհետեւ եկեղեցին հիմնուած է աստուածային իրաւունքներ վրայ, ուստի եթէ ցարը համաձայն իր իրաւունքներ մի մասից հրաժարել, միթէ այդպիսով եկեղեցին էլ կորցնուի չի լինի իր իրաւունքները : Կրօնը չի թաւալանալ կրօնի հետ միտումն օրը բարոյականութեան միակ աղբիւրն է չի՝ թուլանայ եւ ժողովրդի բարոյականութիւնը : Ուստի ժողովուրդը կը բարձրանայ եւ մեղքերի մէջ կը թաղուի : Հետեւապէս ինքնակալութիւնից հրաժարելը աստուածային օրէնքը խախտել է նըշանակում : Իացի գրանից, ներկայ կայսր-պապը իր իրաւունքները ստացել է իր պապերից ու աստուածային ոգորմածութիւնից. մի ոճ-րադրութիւն կը լինի բարձրից եւ կամ որոշումներ դէմ գնալը : Միւս կողմից, ինչպէս կարելի է արդարաւայ յետագայ ժառանգներին առաջ աստուածային հիմնադրութիւնները, երկուք տուած իրաւունքները ոչնչացնելով մի քանի անցողական զրօւարութիւններից ստիպւած : Ինքնակալ կայսրը պարտաւոր է պաշտպանել բարոյականութիւնն ու կրօնը, եւ նա առանցանկութեան արգիցութեանը զիջանելու, պիտի իր ժառանգներին թողնի աստուածային ժառանգութիւնը անխախտ : Ինքնակալ կայսրը, իբրեւ կրօնապետ իրաւունք չունի իր սեփական կամքով փոփոխութեան ենթարկել այն պետական հիմնարկութիւնները, որոնց ներկայացուցիչն է ինքը :

Դրանից յետոյ Վրտակի հետեւեալ մի քանի խօսքն է միայն ասում— «Եթէ յայտարարուի թէ իբր կրօնական ճանապարհով ինքնակալ կայսրը իրաւունք չունի իր կամքով հիմնական բէթօրմներ տալու, այն ժառանգ ժողովրդի մի մասը պիտի մտածի, որ այդ դէպքում այդ բէթօրմները կարելի է ձեռք բերել հակառակ կայսրի կամքի : Դա պարզապէս կը լինի յեղափոխութեան նշան տալ :

Ցարը ոչ մի կարծիք չը յայտնեց : Աւելի անվճռական, քան երբէք, նա փակեց ժողովը եւ . . . այլեւս չը խօսեց մանիֆէստի մասին :

Ցարը ոչ մի կարծիք չը յայտնեց : Աւելի անվճռական, քան երբէք, նա փակեց ժողովը եւ . . . այլեւս չը խօսեց մանիֆէստի մասին :

տական խորհուրդի նախագահ իշխան Սօլսքին, երեւոյց նախարար Բօքօլէվին, ներքին գործոց նախարար իշխան Ս. Միքսքին, դատական նախարար Սուրավիէվը եւ Վիթթէն :

Այս ժողովը թէեւ ազատականներու սպասածին անհամապատասխան արդիւնք մը տուաւ եւ աւելի յետագիւմականներու խաբուսիկ յաշտութիւն մը պարգեւած եղաւ, բայց շատ հետաքրքրական են այդ նիստի մէջ արտասանուած ճառերը զորս Մարկե հրատարակեց եւ որոնց բովանդակութիւնը շատ մը թերթերու, ինչպէս նաեւ Հնչակի մէջ ալ տեսնուեցաւ, այսպէս :

Ամենից առաջ խօսում է արդարադատութեան միջոցով Մուրավիէվը : Սա յետեւելով այն բոլոր օրէնքներին, ուկազներին, դեկրետներին ու չըջարեւական հրամաններին վրայ, որոնք մշակելու արձակելու են Պետրոս Մեծի օրերից սկսած, աշխատում էր ապացուցանել, որ ցարը ըստ օրինի իր աւուսնի չունի պետութեան քաղաքականութեան վերաբերեալ փոփոխութեան իրաւունք : Եւ որովհետեւ ինքնակալութիւնը որ այդ թէթրան ինքն ըստ ինքեան բացառում է ինքնակալութեան էութիւնը, միջոցով ցանկանում էր ապացուցանել, որ ցարը պարտաւոր է պետութեան մէջ տիրող օրէնքները պահպանել իր հարողութեամբ եւ որ իրաւաստանի հիմնական օրէնքները ինքնակալ միայնակութիւնն է. Հետեւապէս Ձաքը օրինազանց կը լինի ու իր պարտաւորութիւնները ճանաչած չի լինի, եթէ նա պետութեան հիմնականները խախտէ :

Իշխան Սեւոստոպոլի Միքսքին չը դժւարացաւ դրան պատասխանել : Նա նկատեց որ ամեն օր ցարը նոր օրէնքներ է հրատարակում, միջոցով եթէ արդարադատութեան միջոցով կարծիքներ հետեւի, այն ժառանգից ցարը տրամաբանօրէն պիտի բոլորովին հրաժարի օրէնքներ հրատարակելուց : Խնդիրը դրանում չէ, աւելացրեց նա : Ակադէմիական խնդիր չէ մեղ զարգացողը. այլ միայն մեղք խորհելու ենք, թէ ինչ միջոցներ ձեռք առնելու է ներկայ քաղաքական դրութեան առաջ : Նորին մեծութիւնը պիտի հանգամանքներ թելադրութեամբ միայն ղեկավարի : Արդեօք ներկայ կացութիւնը կարող է շարունակել անվտանգ : Ես չեմ կարծում Ձերդ Մեծութիւնը թող բարեհաճի լուծել հետեւեալ էական խնդիրը, թէ արդեօք արարուի օրէ պահպանելով է որ աւելի բարդութիւններ կարող են առաջ դալ, թէ մի քանի բէթօրմներ մտցնելով, ինչպէս են օրինակ՝ պատգարներին օչնչացումը, մամուլի ազատութիւնը եւ զէմստվոններ ներկայացուցիչների պետական խորհրդի մասնակցելը :

Ցարը, որ շատ անվճռական դրութեան մէջ էր գտնուում, խօսքը աւելցրեց Ֆինլանդիայի միջոցով : Այս վերջինը, ժողովականներից շատերի համար անսպասելի կերպով սկսեց ապացուցանել, թէ որպիսի ծայրայեղ դժուարութիւններ մէջ պիտի ընկնի կառավարութիւնը, եթէ ժողովրդի ներկայացուցիչները հակոտնութեան տակ առնեն պետական գործերը եւ որ նրանց—ներկայացուցիչները— կողմից բերուելի վրայ հսկելը այն ճակատա-

րեն արդէն ոչինչ են :

3. — Թէ պէտք է արգիւել եւ մինչեւ իսկ պատեւել կուսակցութիւնը սխալ գիրքի մէջ գնդակներին :

4. — Թէ՛ պահանջներ լուրջ, մը տաւոր պաշարի տէր պրօպականդիստներ, մոռնալով տղայական «Ջարդենք, փշրենքները» : Սրանք վարդօր մըտքերն են ասարեք բառերով : Լուրջ եւ ուղղախոս մտքեր :

Ապա անցնելով Դաշնակցական կազմակերպութեան ձեւակերպութեան մասին՝ անկեղծօրէն յայտնում է, որ այսօր Դաշնակցութեան ընթացքը ոչ կեղծական է եւ ոչ էլ տպակեղծական : շատ ուղիղ է, կենդանուր փոխուած է պիտո ի այն էլ Արեւելեան ու Արեւմտեան, որը ուղղակի մի կրկնում յառաջ բերած է. ուրեմն այս պարագայում եւս կենդանուր գոյութիւն աւելի : հետեւաբար չէ կարելի ասել թէ Դաշնակցութիւնը Ապակեղծական է այլ ըստ իւր ասութեան «քառ»

Իսկ աւելի լաւագոյն եւ մեծագոյն միջոց որ հաւասարակշռում է բոլոր վերոգրեւորները, այն է, որ ասում է վարդօ. — Թէ Դաշնակ. Ընդհ. ժողովին գնացող ամեն մի պատգամաւոր պէտք է նախապէս համաձայնի, որ ինք պարտաւոր է երկրորդ մտնել, եթէ այդ պահանջներ Ընդհ. ժողովի կողմից. — Այս յայտարարութիւնն ըսող մարդը եթէ անկեղծ է, ի հարկէ իւր անձն էլ հաշուի առած կը լինի Ընդհ. ժողովի ներկայանալով իւր ազգօգուտ առաջ օրկները պաշտպանելու եւ ընդունելի լինելու համար հետեւաբար ինքը իրան էլ պատրաստ կզգայ ի հարկին հայրենի հողին գերիւր նետելու : Ինչ որ շատ ընական է, վանդի եօթն երկար տարիներ խմբագրութեամբ զբաղած մի մարդ, գիտակ լինելով ազգային-քաղաքական ամէն անց ու դարձի, անտարակոյս շատերից աւելի օգտակար կը լինի բուն երկրին մէջ, ուր մի օր հաւատում ենք ուրախութեամբ տեսնել մեր վարդօին, որը—նախ առնելու ասացանք. — սկզբունքով դեռ շատ շործնական դասեր էլ կարող կը լինի տալ շատ ու շատ, չէղծներին եւ անտարբերների որոնք ինձ հետ կարողանով վարդօի վերջին գեղեցիկ մօքերը, եթէ ունին դեռ իրանց արտումը աշխոյժ եւ մարմնուած ուժ, կը գան կը միանան անկեղծ գործիչներին, եւ մեր մէջ աւանդութեան կարգ անցած անմարանութիւնը կընդունի իւր վերջին հարուածը՝ կործանումը եւ այն ատեն ամեն աղնիւ հայ կը գոչէ Պէշիկթաշիանի հետ— Տնւր ինձ քու ձեռքդ կզրայր : Եւք մեք [*]

ՊԱՅԻԿ

[*] Դ. Ն. Եթէ կարելի ըլլաւ հաշար անգամ փորձուած սասանային անկեղծութեանը հաւատալ :

ՌՈՒՍԻԱ

Արդէն հաղորդած ենք թէ դեկտեմբեր 15 ին Ձաքին նախագահութեամբ տեղի ունեցած արտակարգ նախարարական ժողովը զբաղած է բարենորոգումի ծանօթ խնդրով : Ժողովին մասնակցած էին Ձաքը, Սինդի մեծ դատախազ Բօրիէտօնօսցէվը, պե-



մեծ քերթողական հանձնար մը ըլլալու անշուշտ պիտի գնահատուի : Եւ ա- խորժով կարգացուի :

Սիրա ին «Պոստ» եւ «Սուր»- հակակրօնական եւ հայրենասիրական կարծիքը—գեղեցիկ են : Մանաւանդ վերջինը՝ հարազատ եւ անախիտա ներշնչութեան պատգի մը տպաւո- րութիւնը կը ձգէ : Ս. սկզբնատա- ոով ստորագրուածներն ալ հանգա- րակ, պատկերաշատ ճարտարօրէն հիւսող երեսակագրութեան ծնունդ կերեւին , երեսակագրութիւն մը որ եթէ քչիկ մը աւելի տաքանայ՝ ալլապէս կայծկլաւուն անակնկալներ պիտի տայ մեզի :

Այնպէս կը թուի թէ հրատարակչը մեր մատուր գործունէութեան գէթ մասնակի մէկ ցողացուց իրեն «Գաղանդէք» մեզի զրկելով, ծառայու- ցիւն մը մատուցած է պուլկարա- հայութեան : Իր գործը գնահատել եւ քաջալերել՝ ամենատարբարական պարտականութիւն մըն է : Եւ անոնց համար որոնք կը ճանչնան գրա- կանութեան արժէքը եւ պէտքը մեր ազգային կեանքին մէջ :

ՕՐԻՓՆ

ԿՂԵՐԸ

Մարդկութեան ամեն խաւերու , մէջ , ընդունուած եւ ապացուցու- ւած է թէ՛ այն ժողովուրդները , որոնք այս կամ այն միակողման տէ- րութեան լուծին տակ ճնշուած եւ հալածուած են , իրենց փրկութեան միակ միջոցը ընտրած են յիշափո- խութիւնը :

Հայ ազգը , այդ արեւելեան հին , այլ սակայն դժբախտ ազգը , որ հինգ հարիւր երկար տարիներէ ի վեր թրքական բարբարոսութիւննե- րու ենթակայ եղած եւ ճնշուած է , բնական է յիշափոխութիւնէն զատ , չէր կրնար տարբեր ուղ- ղութիւն մը ընտրել իրեն իրեն :

Փրկութեան ապաւէն : Յիշափոխութիւնէն զատ չէր կր- նար տարբեր ուղղութիւն մը ընտրել իրեն , զի իրեն վիճակից ազ- գերը , Յիշափոխութեամբ միայն , կրցած էին իրենց ազատութեան արշալոյսը ողջունել :

Ուրեմն Հայն ալ պէտք էր Յիշափոխութիւնը :

Հայ Յիշափոխութեան նախնա- կան շրջանին , մէջ երբ ամբողջ Հայ սրտերը խանդավառուած կը տրոփէին ապագայ փրկարար յոյսի սպասումով , երբ Հայ ընդլղումի նախաքայլերուն մեզ հայ հարուստը պահ մը մէկգի թողած անհատական ստոր ու մունտառ հաշիւները , եր- կաթէ ձեռքերով սեղմնուած քսակի բերանը կուգար բանալու ի նպաստ Սուրբ զատին , ու վերջապէս երբ հայ գիտէին ու անուար , արհես- տաւորն ու ծանր հակերու ներքեւ ընկնուած բեռնակիրը կուգային ի- րենց պարտականութիւնը կատարել զէպի ազատագրութեան Սուրբ գոր- ծը , անդին կգերական դասակարգը որ մեր Յիշափոխական կեանքի մէջ կոչուած էր Մեծ դեր կա- տարելու իր պաշտօնի ու դիրքի բերմամբ , խաչին ու աւետարանին կոթնած , անտարբեր , քարացած կը մնար (մասի վրայ համբուով մի քանի բացառութիւններ կը յար- գենք) առանց թափուող արգար ա- րիւնէն խղճահարուելու :

Կղերը իրեն մէկնոյն երկրի զաւակ , փոխանակ հայ հերոսի կուշար կեցած , խաչով թշնամին զիմաւորելու , իր փորը եւ քսակը պարտաւորելու արուեստին վրայ միայն մտածեց :

Բայց այդ չի բաւեց դեռ , առով չի բաւականացու ան : Շատ առաջ չիթանք ու մանրամասնու- թիւններու մէջ չը մտնենք , Դեռ երէկ Վերակազմականութեւ «Հնչակ» թերթը , մօլլա Բարթողիմէոսի արժանաւոր սոսն Արիստակէս Վան- քեանի Մարդուանի մէջ գործած անքաւելի ոճիւրները կը թուէր :

Դեռ երէկ ուշադիր եղայ եր- կու քահանաներու որոնք եկեղեց-

ւոյ խուցին մէջ գլորի Գլխի տը- ուած կը քննադատէին եկեղեցական մը որուն ոտքերու փոշին՝ չին արժեք իրենք , եւ որուն յոյն- ցանքը եղած էր Մանչէսթրի մէջ Յի- ղափոխական նիւթերու վրայ քո- րոզելը :

Ազգային ներկայ ողբալի վի- ճակէն , որ ամեն ճշարտիտ հայու սիրտը կը սարսափեցնէ , այդ խոր- թագածները օգտուիլ կուզեն մութ անկիւններ հակադիպոփոխական պրօ- պականտ մը ընելով , սակայն լաւ թո՛ղ գիտնան այդ ազգաշէտները որ հոս , արտասահմանի մէջ , պատ- րաստ հող չկայ իրենց համար , եւ չար նպատակներ չեն իրագործուի- ր : Ա՛լ ժամանակն է որ սահմանին աստեղ , ա՛լ ժամանակն է որ վերջ տրուի անոնց անախորժ կոկոռնե- րուն :

Կ . ԲՋՆՈՒՆԻ

18 Դեկտ . 1904

ՌՈՒՍՏՈՒԴ

ԱԶԳԱՅԻՆ

Պօլսոյ թերթերուն մէջ կը կարդանք . «Թիֆլիզէն կը գրեն թէ Ն. Ս. Օծուլիւն ընդհանրա- կան Հայրապետը այս օրերս դի- մում պիտի ընէ ներքին գործոց նախարարին խնդրելով որ գը- րաւեալ եկեղեցական կալուած- ները վերադարձուին Հայ Ե- կեղեցւոյն» :

—Վանէն կ'իմացնեն թէ լա- տին եկեղեցականներ Էսէօնքեր կաշխատին իրենց կրթութեան յանձնուած խումբ մը աղաքներ լատինացնել , մոռցնել տալով անոնց հայ Եկեղեցւոյ աւան- դութիւնները տարօրինակ խու- տութեանց ենթարկելով զանէնք : — Չարսանճադի , Շապին Բա-

րահիսարի Սղերդի , Կարնոյ , Սե- րաստիոյ եւ Վանայ վարժարան- ներու եւ որբանոցներու Պատ- րիարքարանէ զրկուած տարեկան նպաստները անբաւական նկա- տելով տեղական վարչութիւննե- րը նպատուի յաւելում խնդրած էին : Նպատուից Յանձնաժողովը նկատելով որ իր միջոցները չեն ներքին , որոշեց յանձնարարել որ պակասած տեղական միջոցներով հայթայթեն :

—Պօլսոյ «Աւետարեւոյ» Յիս- նամեակը պիտի տօնուի ի մօտոյ : Այդ բողոքականաց օրկանին ա- ռաջին թիւը հրատարակուած է 1855 յունուարին :

—Կովկասի կառավարչապետ իշխան Կալիցինի հրաժարելը հաստատուելէ յետոյ կիմանանք թէ անոր տեղ նշանակուեր է Տօնաքի Խազախներու ցեղապետ զօրավար Մաքսիմովիչը :

—Գահիրէի մէջ հրատարակ- ւիլ սկսած քաղաքական , տնտե- սական եւ գրական ԼՈՒՍԱԲԵՐ երկրորեայ թերթի առաջին 7 թիւերը գոհութեամբ ստացանք : Թերթին վարիչները մեղ անձա- նօթ են բայց ուրախ ենք որ լուրջ ուղղութեան մը կը հե- տեին առաջմ. փափաքելի է որ նոյն ուղղութեամբ յարատեւեն : Տարեկան բաժնեգրին է արտա- սահմանի համար 25 ֆր. հասցէն է «Վարչութիւն Լուսաբեր» լը- րագրի-Գահիրէ (Եգիպտոս) :

—Լօնտօնի մէջ «Հայաստանի բարեկամներ» ընկերութեան հո- վանաւորութեամբ միթիւնկ մը տեղի ունեցաւ Հայոց ի նպագայ Կաթողիկոսին պատուիրակներն ալ ներկայ գտնուած են : Անգ- լիացի ազգեցիկ անձնաւորու- թիւններ նաեւ Տ. Լօրիս Մէլիքով

ՆԵՐՍԷՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱՉՄԱՎԷՊ հանդէսէ)

Վերջում Վարչաւայի փոխարքայ նշանա- կուած իշխան Պասկելիչի միջնորդութեամբ—Վա- սիլի եղբայր իշխան Դաւիթը գեներալի աստի- ճան ունէր եւ Պասկելիչին սիրելի էր : Իշ- խան Վարանդովի փոխարքայութեան օրով Վա- սիլ Բէհրութեանցին պաշտօն տուեցին , Ապա առաջին արեւելեան պատերազմի միջոցին նշա- նակուած լինելով Երեւանի նահանգում գտնը- ւող գործող զօրքի գլխաւոր հրամանատար՝ 1854 թուին Բաշկինապիկարի մօտ ռաւաւաւոր զօրքով շատ նշանաւոր յաղթութիւն տարաւ այս իշխան Վասիլ Բէհրութեանցին : Սա , երբ հրամանատար նշանակուած՝ Թիֆլիսից պիտի մեկնէր գէպի պա- տերազմի դաշտը , գնում է առաջնորդարան եւ խնդրում է Ներսէս Կաթողիկոսին , որ այն ժա- մանակը Թիֆլիսում էր , օրհնել իւր սուրն եւ իւր ձեռքով մէջքին կապել : Կաթողիկոսը արտասուալից աչքերով նորան օրհնելով եւ բա- բեմաղթելով նորան եւ Ռուսաց զօրքին յաջո- ղութիւններ՝ իւր ձեռքով թուրը կապում է նո- րա մէջքը : Սրբոր իշխան Վասիլը եկաւ էջ-

միւսին Բաշկինապիկարի յաղթութիւնից յետոյ՝ գոհացողական մաղթանք մատուցուեց իջման սե- ղանի տապ իւր նա շատ ջերմեանդութեամբ ա- ղօթում էր : Վահարանում կաթողիկոսի բացակա- յութեամբ նորան եւ իւր հետ եկող տասիճա- նաւորներին վայելուչ ճաշ արուեց . եւ նա ին- քը սեղանին մասնակցող եպիսկոպոսներին պատ- մեց թէ կաթողիկոսն իրան օրհնել եւ սուրբ մէջքը կապել :

Ղոթիմի պատերազմի ժամանակին Երեւանի Ռուս զօրագունը համարեա մի տարի բնակեցին Վանքում եւ Վաղարշապատ գիւղում : Կաթողի- կոսը Թիֆլիսից գրել էր ինձ որ այնպէս հիւ- րասիրութեամբ պահպանել նորանց , ինչպէս թէ ինքը անձամբ լինի էջմիածնում : Զօրքի գլ- խաւոր հրամանատար նշանակել էին կարճ ժա- մանակի համար Երեւանի նահանգապետ Նազօ ըովին , նորանից յետոյ գնդապետ Կուլիբեակի- նին (յետոյ Երեւանի նահանգապետ) , արանից յետոյ գեներալ Վրանգիլին եւ ապա գեներալ Սուսլովին : Սորանք բոլորն իրենց շտաբով ը- նակում էին վեհարանում եւ կերակրում էին վանքի հաշուով . վեհարանի խոհարարն էր պատրաստում : Ամենայն օր առաւօտ եւ երե- կոյ չորս սածավար էր դուռում . միւս աստիճա- նաւորներն էլ յաճախում էին վեհարանը : Նը- յանաւոր օրերին Նոր- տաւրի , Ծնունդ , Զատիկ բաւոր զինուորներ համար տալիս էինք վա-

րից մասցու , բրինձ , հաց , օղի եւ կարաս- ներով գինի — ամեն ինչ լիութեամբ : Իսկ վե- հարանում բնակողներն եւ այլ նշանաւոր զին- ւորական աստիճանաւորներն համար առանձին բազմախորտիկ վայելուչ սեղան եւ աղիւլ իւր- միջքեր պատրաստ էին . այսպէս որ երբ զօ- րագունը թողնում էր էջմիածինը , բոլորն էլ անկեղծօրէն յայտնում էին մեծ շնորհակա- րութիւն հիւրասիրութեան համար : Ի հարկէ այսքան ծախսերը կատարում էին ամենայն հարազատութեամբ : Թող ցանկացողները ստուք գելու համար գնեն Սիօգում վեհարանի ծա- խուց տուամարներն եւ կը տեսնեն հիւրառէր առատասիրտ Ներսէսի ժամանակի ծախսերն էլ եւ Դէրդը Դ . Կաթողիկոսի ժամանակի , ծախսերն էլ , երբ վեհարանում կերակրում էին միայն ինքն եւ երեք—չորս մարդիկ :

Լազարեանները հինգօրեայ բարեկամներ էին Ներսէսին : Ազա խաչատուրը վստահ լինելով այդ բարեկամութեան վերայ՝ գրել եւ խնդրել էր կաթողիկոսից հրաման տալ , որ իւր երկու աղջիկներին ամուսնացնի իւր հարազատ քրոջ որդիների հետ . մեր Յովհաննէս Դիմանեանցի իսկ միւսը իշխան Սիմէօն Արամէլիքի հետ :

(Շարունակելի)

և Տ. Կ. Գաղութան խօսելով, ազգու կոչ մը ուղղած են Անգլիոյ Հայաստանի օգնութեան հրահրող :

— «Արմէնիա» հոյակապ երկին հեղինակ Տ. Հ. Լինչ բանախօսութիւն մը ըրած է Լոնտոնի «Լընտըն Ինս գիտիւն» ի առջեւ և հայկական խնդրոյ վրայ իր տեսութիւնները պարզած և ցոյց տուած է թէ անհրաժեշտ է որ Եւրոպա բարենորոգումներ մտցնել տայ այդ երկրին մէջ, ըստ Պեռլինի յանձնառութեան :

— Տեղւոյս Աղքատախնամը կիմանանք թէ, դպրոցական 18 աղքատիկ տղայոց համար մէյմէկ ձեռք զգեստ պատրաստած է :

— Հայկական ընթերցարանի ի նպաստ վիճակահանութիւն մը պատրաստուած է, 200 թիւի վըրայ, որոնց 20 ը պիտի չահի : Տոմսակի գինն է 1 ֆր. Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ յունվար 9, կիրակի օրնոյն ընթերցարանին մէջ :

ՀԱՎԱՏՈՒՄ ԱԹԻԻՐՔԻԱ

Թիւրքիան իր մէջնիստան վէ Մակեթոնիա էյալէթլէրինտէն մատա՝ Արապիսթան էյալէթլէրի տախի ըսեան վէ իսթիլալ թէհլիքէսինտէ տիր :

Նէճտ ճիհէթինտէ Վահապի սիւլալէսինտէն շէյխ Սաուտ կէչէնէրտէ թիւրք ասքէրլէրինի վէ Պէն Ազիզ Բաշիտի զալէպէ իթմիշ օլարագ, եագընտա Մէքէ Մէտինէ իւզէրինէ տախի հիւճում իտէճէք կէօրիւնիյօր : Պու Արապլար թիւրքլէրի քեաֆիր ատտ իաուպ խալիֆէիկի ալմագ էֆքեարընտա տըրլար : Պու թէհլիքէտէն տօլայը Սթանպօլտան Պասրայա մուհիմմաթը հարպիյէ վէ ասքէր Եօլլանըլմագաա տըր :

Եէմէնտէ տախի Արապլար թիւրք իտարէսինտէն թաճիզ օլուպ, ըսեանա գալգըշմըշլար տըր : պու թարաֆըն ըսեան րէյիսի Համիտէտտին նամ պիր գապիլէ րէյիսի օլուպ, էլ ալթընտան խարիճտէն սիլահ թէտարիզ իթմէքտէ տիր : Իւշ սէնէ էվլէլ Սուլթան անը պտիւշիշլէրլէ տօսթ իթմէք իսթէտի, ֆագաթ մուվաֆագ օլաւատը, Ես կիւնլէրտէ Համիտէտտին Հօտյէտայը վէ Սանաայը մուհասէրէ իթմիշ օլմաղլէ մուխապէրաթ քէսիլմիշ տիր :

— Էտիրնէ վիլայէթինին պսւկար մուհաճիլլէրինտէն էլան վաթանլարընա ալտէթ իթմէմիշ օլանլարա եէնի պիր իրաստէ իլէ միւսատէ վէրիլմիշ տիր :

— Մանաստըր վիլայէթինին Պուզօլօ քէօյլիւտէ Գոստա Պու-

րութով նամ քէօյլիւ պուլարճա սէլամ վէրտիկինտէն տօլայը մահէլին րուճ հօճասը թէօտօր Բարթէ՛ գամա իլէ անը եարէլէմիշ վէ կիտուպ րուճ մէթրօբօլիտինէ սըղընմըշ : Թիւրք հիւքիւմէթի միւհրիմին սագլանտըղը մահէլի պիլմէքլէ պէրապէր անը թաադիպ իթմէմիշ տիր : (Տընէվնիք)

— Պիր այ մուգատտէմ Պօկտանցի քէօյլիւտէ տէրաէսթ օլընմըշ օլան 7 քիշիլիք պիր րուճ չէթասը՝ ճէզա գանուենա՝ մէսինին 46 նճը մատտէսինէ թաթպիլէն սէրպէսթ պըրա՝ գըլմըշ : Իշպու մատտէ իւզրէ, չէթա րէյիսի վէ մէմուրը օլմայան գօմիթալար իւք էմիրտէ թէրիլմ օլընըրլար իսէ ճէզատան մուաֆլ ատտ օլընըրլար ըմըշ : Փագաթ պու մատտէնին ահքեմը եալընըլ րուլարըն լէհինէ իսթիմալ օլընըյօր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Ե

Բ. Արթուրը թէսլիմ ալտըգտան սօնրա ժէնէրալ Նօկինին Թօքիօյա Եօլլաաղը րաբօրթ իւզրէ, ճաբօնլըլար Բ. Արթուրտա 1780 վաօն վէ 100 պարկիւր պուլմուշլար, ֆագաթ րուսասքէրլէրին մըգտարը զանն օլընտըղնտան քէք զիյատէ իմիշ՝ եանի 57 միրալայ վէ պինպաշը 100 գօլաղասը, 531 եիւզպաշը վէ միւլաղըմ էվլէլ, 200 միւլաղըմ սանի, 99 ասքէրիյէ մէմուրլարը, 109 ասքէր հէքիմի, 20 րահիպ, 25434 գարա ասքէրի, 4500 պահրիյէ ասքէրի 3640 քիւշիկ ասքէրիյէ մէմուրլարը, 500 պահրիյէ մէմուրլարը վէ պուլարտան մատա 15000 եարէլի վէ խասթա ասքէրլէր : Քէզա 80000 թօնօ քէօմիւր վէ իքի ոյ քէֆայէթ իտէճէք ուն վէ օթ :

— Ճաբօնլըլար պաշլըճա շուշարթլար իլէ միւրուլէհէի գապուլ իտէպիլէճէքլէրինի շրյըր րէսմի սուրէթտէ կէօսթէրմէքտէ տիրլէր :

1) Մանչուրիան Ձինէ թէսլիմ օլընմասը :

2) Քէզա րուս չըմէնտըֆէրին Ձինէ սաթըլմասը : §

3) Բ. Արթուրըն վէ Գուանկիթանկ նիմ ատանըն իտարէսի ճաբօնա թէրք օլընմասը :

4) Տալին իտարէսինին Ձինէ թէսլիմ վէ ինմանըն ումուլ տէվլէթլէրին թիճարէթինէ ալըգ պուլընմասը :

5) Բ. Արթուրտան էճնէպի իլիմանլարընա գաշմըշ օլան րուս վաբօրլարըն ճաբօնա թէրք ու թէսլիմի :

6) Գօրէա միւսթագիլ պիր հիւքիւմէթ գալմագլէ պէրապէր ճաբօնըն հիմայէսի ալթընա

կիրմէսի : Օրատա րուսլարըն էլտէ իթմիշ օլտըգլարը իմթիւազաթըն մահվ իտիլմէսի :

7) Գօրէտըն մուհաֆագաը իշիւն սէվահիլտէ վէ պաղընօթալարտա ճաբօնըն իսթիհքեմալար եարմասը :

8) Սախալին ատասընըն ճաբօնա թէրքի :

9) Ուսու վէ Գամաթքա սահիլլէրինտէ պալըգըլըղա ճաբօնլարա միւսատէ օլընմասը :

10) Էն լաղը 100 միլիոն ինկիլիզ լիթասը ճաբօնա թազմիւնաթ էօտէնիլմէսի : Էկէր մի հարէպէ ուզուէ սիւրէր իսէ Վլաթիլօթօք իշիւն տախիշարթլար գօնուլմասը :

11) Ագսաի Շարգտա պուլթուլթմայա սահիլլէրտէ Բուսլարա ասլա իլիման վէրիլմէմէսի : Եալընըլ Տալինի տիկէր տէվլէթլէր կիպի թիճարէթ իսթիմալ իտէպիլմէլէրի :

12) Մանչուրիայա Ձին իտարէսի եէրլէշէնէ տէկին ճաբօն ասքէէի պիր միւսատէթի օրատա գալմասը :

— Բ. Արթուրտան «Տէլի թէլէկրոֆ» իշար օլընտըղը իւզրէ, ճաբօնլըլար օլ ճիվարտաքի աղըր թօբլարըն Շահօնէհրինէ նագլ իթմէկէ պաշլուլմըշլար : Պու թէտպիլլէ մարէշալ Օեամանըն թօք գուվլէթի Գօրաթթիւնին թօք գուվլէթիւնտէն եիւքտէք օլաճագտըր :

— Բ. Արթուրտան «Տէլի թէլէկրոֆ» իշար օլընտըղընա պինաէն, Աստրիա, Ալմանիա իմքէրաթօրլարը վէ իթալիա գրալը Ձարա պիրէր մէքթուպ եալարագ սուլհ իշիւն միւտալէլէ իթմէկէ քէնտիլէրինէ միւսատէ իթմէսինի թէքլիթ իթմիշլէր :

— Բ. Արթուրտա ճաբօնլըլար պիր ազ ասքէր պըրագուպ, թէքմիլ օրտուլը Գուրօթթիւնէ գարշը Մուգտէն ճիվարընա կէօնտէրիյօրլար :

— Բ. Արթուրտա 25000 րուս ասքէրի թէլէթ օլմուշ :

— Սթօսէլ ժէնէրալ Նօկի իլէ կէօրիւշմէսինտէ տէմիշ տիր : «Ճաբօնըն գուվլէի ասքէրիյէսինի պիլմէտիկիմիզ մուհարէպէյէ սէպէպ օլտու : Ալ պիր միւստէթ տահա Բ. Արթուրտա տայանա պիլլիրտիք ֆագաթ չօք պայիաթ վէ թէլէթիաթըմըղ օլաճագ ըտը : Պիօյիկ թօբլարըն եէթիշմէոի թապ սւ թաանըմըղ քէստի : Պալթիկ տօնանմասընըն իօլա տէվամ իթմէսի ֆաիտէսիլ տիր :

— Շթօսէլ թէսլիմտէն էվլէլ պիլթիւն պայրագլարը եագմըշ : Թէսլիմտէն պիր կիւն սօնրա չէհրին իքի եէրինտէն

եանկըն զուհուր իթմիշ : Քէզա տահա էվլէլ հարպ վաբօրլարը վէ սայիր մուհիմմաթ եանմըշ : Թէսլիմ մուգալլէլէսի ահքեմալընճա պուլտան տօլայը Բուսլար մէսուլ, թուլթո լիյօըլար : Էլիէվմ թահգիլաթ, իճրա օլընըյօր :

ԾԱԽԻԻ ԳԻՐԳԵՐ

Ի ՆՊԱՍՏ

ՏԱՐՕՆԻ ԱՐԿԱՅԵԱԼՆԵՐՈՒՆ

Մինչեւ յունվարի վերջը հետեւալ գիրքերէ ծախուածնէրու արժէքին 100 ին 50 ը կը յատկացնենք Մուշի և Սասնոյ թշուառներուն : Իրենց սիրելիները ու բարեկամները կաղանդելու համար այս գիրքերը գնողները նպաստած պիտի ըլլան նաև արկածեալներուն : Թշուառներու անունը ումանց պէս չահագործելու ու եկամտի տեղի չտալու համար, կը յայտարարենք թէ մինչեւ Յունուար 31 գնողներու անունները կամ սկզբնատուերը պիտի հրատարակենք հաշուեցուցակով միատեղ, վաւերացեալ թաղ : Խորհրդէն, որուն պիտի յանձնենք պատկանեալ զուհարը իր նըպակին զրկելու համար :

ԹԻՒՊԱՐՏ Ս. հատոր (162 էջ) 1 ֆր. « Բ. » (433 էջ) 2 ֆր. ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՂ անդամ տպագրուած և ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանք անոնց ազատութենէն առաջ : Գին 50 սանպիմ

ՀԱՅԲԵՆԻԹԻ ԶՈՔԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն : 2 հղչեալ գին 1 ֆր.

Գիմիլ Ձարպահնէլեան գրատուելու ու կը գտնուին գիրքերը կնքուած :

Ուրիշ քաղաքներէ և արտասահմանէ գիմողները պարտին ամէն մէկ ֆր. ի համար 10 սանպիմ րօսթի ծախք աւելցնել :

ԿԱԼԱՆԴԻՔ

Գրական փշրանքակիր

Լոյս տեսաւ : Դինը 40 սանպիմ : Ծախողներու բնաւ զեղչ չ'կայ : Ամեն ազգի գրաշարութեան կընդունուի, փափաքողք 5 սանպիմ աւելի փոստի ծախք զրկելով կրնան ստանալ անկէ մէկ օրինակ զիմելով Մ. Գալիպօճեան Վառնա հասցէին :

Одговорникъ А. Курбетиянъ
почтаище—«Вашинестъ», Варна

